ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ

03.11.2022 № 1-7/669

Ձեր №

0033, ք.Երևան, Հր. Քոչար 5/2 Հեռ. Тел. Phone+(374.10) 225 355
0033, г.Ереван, ул. Гр.Кочара 5/2
Hr.Kochar 5/2, Yerevan, 0033
Fax: + (374.10) 260 806
E-mail: info@armarchive.am

«Մեծ ծիածան» ՍՊԸ տնօրեն
Գ. Եսայանին (ՀՎՀՀ. 00103837)
Ք. Երևան, Վ. Համբարձումյան 91
Հեռ. 010-32-34-24, 034-46-97-46
ciacanmarket@gmail.com

Ծանուցում

ՀՀ արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և «Մեծ ծիածան» ՍՊԸ-ի միջև 17.03.2022 թ.-ի կնքված «ԱԱ-ՏԱՁԲ-2022/3-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Մեծ ծիածան» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարելու ապրանքներ (հեղուկ օճառ՝ 200 հատ, օդորակիչ՝ 2 հատ, խոնավաչափ՝ 1հատ և լուսամուտների ապակիների մգեցման թաղանթ 80 ք.մ.): ՍՊԸ-ն պայմանագրային իր պարտավորությունները կատարել է՝ բացի երկու օդորակիչների մատակարարումից: ՊՈԱԿ-ի պատասխանատու աշխատակցի կոմից բանավոր տեղեկացվել է «Մեծ ծիածան» ՍՊԸ-ին պայմանագրով նախատեսված, բայց չմատակարարված ապրանքի մատակարարումներն իրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև 11.10.2022 թ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրենի թիվ 1-7/617 գրությամբ եռօրյա ժամկետ է սահմանվել ապրանքի մատակարարման համար, սակայն Ձեր ընկերության կողմից այն մինչև այժմ չի մատակարարվել:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ինչպես նաև 2.1.7.1 կետի բ ենթակետը՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը հայտնում է Ձեզ, որ 2022 թ. նոյեմբերի 2-ից՝ միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 2 հատ օդորակիչի մասով, որի գումարը կազմում է 22.400 (քսաներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Նշված գումարի չափով պայմանագրի միակողմանի լուծումից հետո՝ «ԱԱ-ՏԱՁԲ-2022/3-1» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 528.100 (հինգ հարյուր քսանութ հազար հարյուր) ՀՀ դրամ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման

հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Մեծ ծիածան» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 9000050286106 հաշվեհամարին փոխանցել 1388 ՀՀ դրամ՝ որպես տույժ, պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000698 հաշվեհամարին ենթակա է գանձման 2240 ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ Պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 3360 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022 թ. Նոյեմբերի 11-ը ներառյալ Ձեր կոմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա «Մեծ ծիածան» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել կենտրոնական գանձապետարանում՝ ՀՀ ֆինանսների նախարարության անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի գնումների համակարգողին:

Հարգանքներով՝
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Սարուխանյան

Կատարող՝ Ե. Մուրադյան,
«ՀԱԱ» ՊՈԱԿ-ի գնումների
համակարգող
Հեռ.091-47-04-34